միջասահմանին Օրտուպատայ և Մեղրեայ՝ զեռայ գեան ընդ առապարս և ընդ խոխոմս, տեսարանս յոյժ զմայլեցուցիչս աչաց և պակուցանողս գործելով, և ահագին դռնչիւն ականջաց. նոյն կերպարանք յանդիման ընկնին և անդր քան զՄեղրի, այլ չափաւորք և նուազք, մանուածք ջրվիժք. այս է տեղին "ուր գեան Երասխ հատեալ զքարանձաւս լերանց՝ ,, անցանէ ընդ խոխոմն ձիգս և նեղս, ահագին գը,, գրչմամբ իջանէ 'ի դաշտն ,, (Մուղանայ), ըստ խորոնեցւոյն: Բարեբեր և այգեւէտ են վիճակքն, և գեօղք շէնք 'ի նոսին Ալպարս Թաթարաբնակ, Աղբաղոր հայաբնակ, որոյ է ագուգայ ջրաբաշխի մեծ և բարձր և միակամար 'ի վերայ խորահովտի միոյ. Նուշարի Թաթարաբնակ՝ 'ի բարեբեր խորահովտի: Յելից սորա իջանէ Պարարի գետակ յԵրասխ առ որով Շանուալ աւան. և 'ի նորա ելից Զավընդուր, որում մերձ կայ Թէրի կամ Տելիթուալ գեօղ. իսկ ընդ մէջ Զավընդուրայ և Պերկուշատայ կայ Խաճխան գեօղ և առ նովին աւերակ գղեկի խաչքեան դարպաս կոչեցեալ. բաղում գեօղք շէնք գոն 'ի գեղեցիկ հովտին Պերկուշատայ, և Հաքարու. յորս տակաւին տանուտերական պայազատութեամբ առաջնորդեն մելիք Թաթարք և Հայք՝ սերունդք նախնի Սիսակեանց, որք յամրութիւն երկրին իւրեանց և 'ի քաջութիւն վստահացեալ՝ հակեցին ընդերկար 'ի վերայ հայրենի ազատութեան. և մարթ է զբովանդակ երկիրս այս 'ի Գեղաքունեաց ցԵրասխ ընդ հարաւ, և 'ի դաշտէն Այրարատայ ցմեծ դաշտն Կուրայ կամ Ուռիոյ՝ կոչել Կովկաս Հայաստանեայց, կամ Ստորին Կովկաս. առաւելեալ քան զբարձրն բնակչացն բարգաւաճ բարուք:

174. Գ. ՁԼԱԲԵՐԴ գաւառ որ է ՃԵՌԵԲԵՐԴ ըստ Նախնեաց և ՁԵՐԵԲԵՐԴ ըստ յետնոց, կայ 'ի հարաւոյ Այրումայ, յելից Զանկազորայ, խաչէն և Գարգար գեղովք անջրպետի 'ի Վաղանդինայ 'ի հարաւոյ, և յելից ունի զՃեւանշիր գաւառ կամ զդաշտն Աղուանից: Եւ է սա վերին մասն ԽԵԶԷՆ աշխարհի, որպէս կոչէր 'ի միջին դարս և այժմ, կամ ՓՈՔՐ ՍԻՒՆԻՔ, և ըստ հնոց նախնեաց միջին մասն Արցախ աշխարհի, վասն որոյ և ՄԻՋԵՐՏԱԽ կոչէր, և գաւառք 'ի նմա էին ՄԵԾԿՈՒՆԻՔ կամ Մեծ-ուք՝ որ և Մեծ-կոմանք, ՄԵԾԻՐԵՆՔ կամ Մեծարանք, և ՄԻՍՀԱԲԱՆՔ: Գեան Թարթառ յարևմտից յարևելս անցանէ ընդ գաւառս այս՝ հատեալ լերկուս. հիւսիսային մասն բուն Ձլաբերդն է կամ ՎԵՐԻՆ ԽԵԶԷՆ, հարաւայինն ԿԻՒԼԻՍՏԱՆ կոչի այժմ, և է ՆԵՐՔԻՆ ԽԵԶԷՆ միջին դարուց. յորում ժամանակի և միջնակողմն առ Թարթառաւ ՁՂԱԽ կոչիր. գեան խաչենոյ խաղայ ընդ մէջ Թարթառայ և Գարգարայ: Հանգոյն արևմտեայ գաւառաց Գարապաղու լեռ նախիս է և այս գաւառ, և 'ի հիւսիսային սահմանածայրսն մերձ 'ի խոչխարա՝ ամբառնայ բարձրագոյն կատար չափեալ 'ի Գարապաղ՝ Մարով կամ Մարու լեառն 11540'. ապաւէնք էին վանդեցոց 'ի ժամանակս պատերազմաց լերինքս անդստին յաւուրց Վարդանանց, որպէս ցուցանեն պատմիչք, և առ Բագրատունեօք և զկնի: — Ի հիւսիսակողմն արևելից գաւառիս առ ստորոտովք Մռաւայ ձգի փոքր վիճակն ԻԿԻՐՄԻՏԷՕՐԹ, այսինքն է Քսանեւչորս, սակս համարեալ գիւղորայիցն, որք կոչին և յանուն գլխաւորին իւրեանց Զէյվայ կամ Զէյվալու առ իւրանուն վտակաւ. Կիւլիսպան բերդ 'ի հիւսիսոյ Թարթառայ. Պուլանըգ և Գարապուլուգ գեօղք և մենաստանք: Մերձ 'ի Զէյվայ և 'ի Մռաւ կայ հոռի գիւղ, որ է Ռուեանն հին, ուր հանգուցաւ գլուխ Ս. Եղիշեայ առաքելոյ, և ապա փոխեցաւ 'ի մերձակայ վանսն Նէրս-Միր կոչեցեալ նախ և ապա Զրվարի մինչև ցայժմ. այժմու եկեղեցին նոր շինեալ է յամին 1279-85 յիշխանաց և յեպիսկոպոսաց Խաչենու. զհին շինեալ էր Վաչագանայ Աղուանից արքայի 'ի վերջ կոյս Ե դարու. զի յետ բառնալոյ Թագաւորութեանն Արշակունեաց՝ Աղուանք տիրեին կողմանց Խաչենոյ: Մերձ 'ի սա կան աւերակք Մայրաղաղ կոչեցեալ տեղւոյ. և վանքն Երէց Մանկանց շինեալ յամին 1664:

175. Յարևելից վանացս առ Թարթառաւ յահեկէ կայ անառիկ ամրոցն ԶԼԷԷՐԴ կամ ՃԵՌԵԲԵՐԴ որ և ՁԷՐՄ-ի կոչի, ապաւէն իշխանացն Խաչենոյ: — Անուանի է և Հոռէրդ կամ Հայռէրդ բերդ 'ի մէջ կուսէ առ Նովին Թարթառաւ, ուր յԺԲ դարու իշխէին Վախտանգեան իշխանք: Միւս ևս բերդ անուանի էր Հանդաբերդ 'ի ՎԱՅՈՑՈՒՆԻՍ Արցախոյ, յարևմուտս հիւսիսոյ մերձ սահմանաց Ծար աւանի Գեղարքունեաց: Եւ քան զսոսա անուանի էր Խաչէնոյ Բերդն որ Թուի առ համանուն գեառին լինել, և սա ապաւէն իշխանաց Ներքին Խաչենոյ, որ և ԽԵԶԵՆԱՁՈՐ. որոց պայազատութիւն յիշի յԺԲ դարէ ցԺԻ դար, յորոյ սկզբան Ջալալբեկ իշխան նեղեալ յՕսմանեանց հատուած 'ի Պարս գնաց. 'ի նոցին իշխանազանց Ջալալեանց կացին և կաթուղիկոսք Աղուանից ցմեր ժամանակս, որոց յետին անուն եղև ԳԱՆՁԱՍԱՐ, որ 'ի ստորոտս լերին համանուան (գանձուց կամ բովուց սար) կայ, 'ի հիւսիսային ոտին Խաչէն գեառոյ. մենաստանն անուանի յիշի 'ի ԺԱ դարէ. բայց նոր շինութեամբք պայծառացաւ յԺԳ դարու 'ի ձեռն Ջալալդօղլայ իշխանի մեծի, որոյ և գեղեցիկ արձան յիշատակի կայ յեկեղեցւոյն մեծի, ուր եդ զգլուխս Ս. Կարապետին և զայլ նշխարս սուրբս, զորս Եւստաթեայ աշակերտին Թադէի և Ս. Լուսաւորչին և Թուին նորա Գրիգորիսի բերեալ էր, որոց և աթոռ Ճանաչի տեղիս. և ինքն և նախնիք իւր և սերունդք և բաղում կաթուղիկոսք Աղուանից անդ թաղեալ կան, որոց յոլովից մեան և արձանագիրք 'ի վանսն ցԺԶ դար. յամին 1657 նորոգեցաւ ուխտս յԱբովայ մելիքէ ԹԱԼԻՐՅայ (որ ընդ մէջ Թարթառ և Թուրուս գեառոյ յելից Կիւլիստանու), և անընդմէջ յաջորդութեամբ նստան 'ի նմա կաթուղիկոսունք Աղուանից ցամն 1815, յորում բարձաւ անուն իշխանութեանն և կոչեցաւ մետրապոլիտութիւն. այլ ցեղ կաթողիկոսացն 'ի Ջալալեան տոհմէ է, որպէս և այժմու բարեացապարտ մետրապոլիտն, Տէր Բաղտասար Հասան-Ջալալեան: — Հանդէպ Գանձասարայ առ գեառին 'ի բարձու քարակուռ լերին կայ բերդն Խոխան կամ Խոխան, աւերեալ 'ի Թաթարաց: